Ըստ Ռուսաստանի դաշնության պաշտպանության նախարարության հրապարակած քարտեզի՝ ներկայումս պատմական Արցախի, համապատասխանաբար Լեռնային Ղարաբաղի տարածքի երկու երրորդը կրկին գտնվում է Ադրբեջանի վերահսկողության ներքո (տե՛ս նկար 1): Մնացած մեկ երրորդն, այստեղ ներկայացված է իբրև «կանաչ հյուսիսային» և «դեղին հարավային» գոտիներ, որոնք վերահսկվում են ռուսական խաղաղապահ զորքերի կողմից: Ռուսական վերահսկողության ներքո գտնվող «հարավային գոտու» մեջ է մտնում նաև այսպես կոչված Լաչինի միջանցքը, մինչև այժմ անվանումն ունեցող համայնքի կենտրոնով (հայերեն՝ Բերձոր): Այստեղի հայ բնակչությունը, ինչպես նաև Աղավնո և Սուս բնակավայրերինը պարտադրվեց մինչև 2022 թ. օգոստոսի 25-ը լքել իրենց հայրենիքը՝ Գորիսի ու Ստեփանակերտի միջև կառուցված նոր ճանապարհի պատճառով: Ջրի, գազի և էլեկտրականության մատակարարումն արդեն իսկ ընդհատվել էր Ադրբեջանի կողմից: Փախստականները ճարահատույց այրում էին իրենց տներն ու իրենց հետ վերցնում մահացած հարազատների ոսկորները:

2020 թ. սեպտեմբերի 27-ից մինչև նոյեմբերի 9-ն ադրբեջանական նվաճումների պարագայում խոսքը գնում է Քելբաջարի (հայերեն՝ Քարվաճառ), Լաչինի, Հաղրուօթի շրջանների և Մարտունու շրջանի արևելյան հատվածի մասին: Խորհրդային տարիներին (1921-1989/90 թթ.) Հաղրուօթն ու Մարտունին գտնվում էին դեռևս ԼՂԻՄ-ի կազմում: Ուկրաինական պատերազմի ստվերում, Ադրբեջանը կրկին խախտեց հրադադարը և նոնականետերով գնդակոծեց հայկական Փառուխ և Խրամորթ գյուղերը, ինչի հետևանքով բնակչությունը ստիպված եղավ երկրորդ անգամ տարհանվել:<sup>1</sup>

1 Cricchio (2022):

Երբ մենք խոսում ենք Արցախում հայկական նյութական մշակութային արժեքների պաշտպանության մասին, ապա ուշադրությունը սևեռվում է ռուսական իրավասության գոտուց արևմուտք, հարավ և հարավ-արևելք գտնվող մշակութային հուշարձաններին: Այս տարածքը ներառում է օրինակ՝ Քելբաջարի շրջանում գտնվող հայտնի Դադիվանքն իր ավելի քան 100 հայերեն արձանագրություններով: Այն նվիրված է Թադեոս առաքյալի աշակերտներից մեկին՝ սբ. Դադին: Վանքի պահպանված շինությունները թվագրվում են 9-13-րդ դդ.: Ցավոք, 2022 թ. ապրիլի վերջից Ադրբեջանը տարբեր պատրվակներով, ինչպես օրինակ՝ համաճարակը, ճանապարհաշինությունը և այլն, արգելում է ուխտավորների այցելությունը Դադիվանք: Այնտեղ մնացել են Հայ առաքելական եկեղեցու միայն հինգ վանական: Վերջիններս ոչ միայն չեն կարողանում ընդունել ուխտավորներին ու հավատացյալներին, այլև հնարավորություն չունեն դուրս գալ վանական համալիրից՝ վախենալով, որ իրենց հետագա մուտքն այնտեղ կարգելի: Այդ վանականներն ամիսներ շարունակ կատարում են իրենց պարտականությունները, այդ թվում՝ աղոթել, ժամերգություններ և պատարագներ մատուցել՝ ռուս խաղաղապահների ներկայությամբ:

Եվրոպական խորհրդարանը 2022 թ. մարտի 10-ի իր բանաձևում նշում է, որ «1456 հիմնականում հայկական հուշարձաններ 2020 թ. նոյեմբերի 9-ի զինադադարից հետո գտնվում են Ադրբեջանի վերահսկողության տակ»:<sup>2</sup> ՀՀ արտաքին գործերի նախարարության ՅՈՒՆԵՍԿՕ-ի պատվիրակության տվյալներով՝ Ադրբեջանի վերահսկողության ներքո է հայտնվել հայկական պատմամշակութային արժեքների շուրջ 2000 օբյեկտ: Դրանք ներառում են՝ 161 հայկական եկեղեցի, ավելի քան 10 մատուռ, 52 բերդ և ամրոց, 591 խաչքար, Տիգրանակերտի հնավայրը, Ազոխի պալեոլիթյան քարանձավը, Նոր Կարմիրավանի դամբարանները և ճարտարապետական հուշարձանները, ինչպիսիք են՝ պալատներ, կամուրջներ ու պատմական թաղամասեր:<sup>3</sup> Եվրոպական խորհրդարանն, այս մասին շարունակելով, նշում է, որ ադրբեջանական պատերազմի կուսակցությունը «2020 թ. պատերազմի ընթացքում միտումնավոր զգալի վնաս է հասցրել» հայկական մշակութային ժառանգությանը, «մասնավորապես տեղի է ունեցել՝ Ղազանչի/Շահկերտի եկեղեցու և Շուշա/Շուշիի Ղազանչեցոց տաճարի (Ամենափրկիչ) հրետակոծումը, ինչպես նաև այլ եկեղեցիների ու գերեզմանատների կործանումը, գործածության փոփոխումն ու վնասումը թե՛ հակամարտության ժամանակ և թե՛ դրանից հետո: Դրանցից են օրինակ՝ Սբ. Աստվածածին Ջորավոր եկեղեցին Մեխակավան (Ջեբրայիլ) գյուղաքաղաքի մոտ և Սբ. Եղիշեի եկեղեցին Լեռնային Ղարաբաղի Մատաղիս (Սուքովուշան) գյուղում»:<sup>4</sup>

Ամբողջ պատմական Արցախն իր մոտ 12000 կմ<sup>2</sup> տարածքով, պարունակում է հարյուրավոր հայկական հուշարձաններ, որոնցից շատերը այն վայրերում են, որտեղից հայերը փախել կամ վտարվել են: Շատ դեպքերում դրանք հիմնականում

2 European Parliament (10 March 2022):

3 Ministry of Foreign Affairs of the Republic of Armenia (2022), 3:

4 European Parliament (10 March 2022):

քրիստոնեական սրբավայրեր են, այսինքն՝ մատուռներ, եկեղեցիներ և վանքեր, ինչպես նաև հիշատակելի շինություններ ու հատկապես խաչքարեր: ՀՀ կառավարության 2022 թ. մարտի 7-ի վերոնշյալ զեկուլցում շեշտվում է, որ Արցախի շրջանում կա շուրջ 4000 հայկական մշակութային օբյեկտ, այդ թվում՝ 370 եկեղեցի, 119 բերդ և տարբեր դարերի պատմամշակութային այլ հուշարձաններ ու հնություններ:<sup>5</sup> Որպես լեռնային երկրամաս՝ Արցախը, ուշ անտիկ ժամանակաշրջանից իվեր, նահանջի տեղ է եղել հալածվող կամ ճնշվող քրիստոնյա հայերի համար: Արցախի պատմությունը սերտորեն կապված է Հայ առաքելական եկեղեցու հետ:

Ինչ վտանգներ են այժմ սպառնում քրիստոնեությանը ներշնչված հայկական մշակութային հուշարձաններին՝ Ադրբեջանի կողմից վերահսկվող տարածքներում: Խոսքը հետևյալ երեք խնդիրների մասին է.

- Ակտիվ, դիտավորյալ ոչնչացում, օրինակ՝ զինվորականների կողմից պայթեցման կամ քարերն այլ շենքերի կառուցման համար գողանալու և կամ էլ վանդալիզմի միջոցով քանդելու հետևանքով: Վանդալիզմի օրինակ ենք գտնում Քարինտակում, որտեղ ադրբեջանցի զինվորները, 2020 թ. աշնանը գյուղը գրավելուց հետո, պղծել և ավիրել են Սբ. Աստվածածին եկեղեցու խորանն ու ներքնամասը:<sup>6</sup>
- Պասիվ, դիտավորյալ ոչնչացում և համապատասխանաբար՝ անտեսում. քայքայումից վտանգված կամ երկրաշարժի հետևանքով վնասված ու նույնիսկ ավերված հուշարձանները չեն վերանորոգվում և վերակառուցվում:
- Գաղափարական (կրոնական կամ ազգայնամոլ) դրդապատճառներով իրագործվող վերաիմաստավորում և համապատասխանաբար՝ մշակութային յուրացում:

Բարեբախտաբար, ղարաբաղյան հակամարտությունը մինչ օրս կրոնականացված չէ՝ քրիստոնյա-իսլամական անտագոնիզմի տեսքով: Փոխարենը, տեղի է ունենում ազգայնամոլությամբ երանգավորված «ալքանիզացում»: Դա Ադրբեջանի պատմությունն ավելի վաղ ժամանակի վերագրման մի փորձ է: Արդյունքում, ղարաբաղահայկական մշակութային հուշարձաններն, արդեն իսկ խորհրդային տարիներից սկսյալ, վերագրվում էին ուշ հնադարում գոյություն ունեցած կովկասյան-ալքանական Աղվանք (Ալքանիա) պետությանը, որի անմիջական և միակ ժառանգորդն ինքն իրեն է համարում ներկայիս պաշտոնական Ադրբեջանը: Դրա համար էլ ուղիների ինքնակոչ կրոնական առաջնորդ Ռոբերտ Մոբիլին, 2020 թ. աշնանային պատերազմից հետո, Ադրբեջանի կողմից օկուպացված Հադրուֆի շրջանի 17-19-րդ դդ. հայկական խաչքարերը հայտարարեց՝ «ալքանական»:<sup>7</sup>

5 Ministry of Foreign Affairs of the Republic of Armenia (2022), 3:

6 Armenia Today (8 February 2022):

7 Adamov (2021):

Ինչի մասին է գնում խոսքն այս հարավկովկասյան Ալբանիայի պարագայում: Արցախը, ն. Ք. 2-րդ դարից սկսյալ, կազմել է Հայաստանի անտիկ թագավորության տասներորդ նահանգը: Երբ Հայաստանը մ. թ. 387 թ. բաժանվեց Պարսկաստանի և Արևելյան Հռոմի միջև, Արցախը, մինչև 7-րդ դ. պատկանում էր Սասանյան Պարսկաստանի հարավկովկասյան Ալբանիա կոչվող սատրապությանը, որից հետո մինչև 9-րդ դ. գտնվում էր արաբների տիրապետության ներքո: Սահմանային Կուր գետի աջ կողմում գտնվող հնադարի պարսկական Ալբանիա սատրապությունը հայերենով Աղվանք տեղանունով էր նշվում: Ուշ անտիկ ժամանակաշրջանում՝ Հայաստանի հյուսիսարևելյան Արցախ, Ուտիք և Փայտակարան նահանգների բնակչությունը հիմնականում բաղկացած էր հայերից, աղվաններից և ուդիներից: Սակայն այժմ ուդիներենը հյուսիսարևելյան կովկասյան, համապատասխանաբար՝ լեզգիական լեզվախմբի մահացող լեզու է:

Հայաստանը ևս, քաղաքական դրդապատճառներից ելնելով, շահագրգռված էր Հարավային Կովկասում քրիստոնեության տարածմամբ ու ամրապնդմամբ: Ասվում է, որ Հայաստանի լուսավորիչ Ս. Գրիգորն անձամբ ինքն է մկրտել աղվանից տիրակալին: Հայկական ավանդույթի համաձայն՝ Գրիգորի թողը քրիստոնեացրել է ողջ Աղվանքն ու Արցախը: Այսպես կոչված Աղվանից կաթողիկոսության նստավայրը դարձել է 14-րդ դ. վերջից Արցախի ազդեցիկ Գանձասար վանքը: Կաթողիկոսի ժառանգական պաշտոնը, միջնադարից ի վեր, պատկանում էր Հասան-Ջալալյանների հայ ազնվական ընտանիքին: 1815 թ., ռուս ուղղափառ եկեղեցու սրբազան սինոդի կողմից և էջմիածնի Ամենայն Հայոց կաթողիկոսության դրդմամբ, այդ կաթողիկոսությունն իջեցվեց միտրոպոլիտության աստճանի: Երբ 1836 թ. Նիկոլայ Ա ցարը վերակազմավորում է հայկական եկեղեցական համակարգը, նախկին Աղվանից կաթողիկոսության տարածքը բաժանվում է մի քանի թեմերի և դրվում Թբիլիսիի հայկական կոնսիստորիայի վերահսկողության ներքո: 1914 թ. Ղարաբաղի թեմը 224 բնակավայրերում ուներ 222 եկեղեցի և վանքեր՝ 188 հոգևորականներով և 206000 հավատացյալներով:

Փաստորեն, ամենաուշը 10-րդ դարում Աղվանքը դադարեց որպես առանձին պետություն գոյություն ունենալուց: Քրիստոնյա աղվաններն ու ուդիները, որոնց վրա չէր ազդել իսլամացումը և դրան հաջորդած թուրքացումը, մեծ մասամբ կլանվեցին հայկականությանը: Այդուհանդերձ, ադրբեջանական ազգայնամոլ պատմական նարատիվը կառուցվում է Լեռնային Ղարաբաղի զուտ արբանական տարածաշրջանային պատմությանը, որտեղ հայերը հանդես են գալիս որպես ուշ շրջանում եկած զավթիչներ: Իրականում հայերը քաղաքական ու մշակութային առումով ազդեցիկ են եղել այստեղ դեռ անտիկ ժամանակներից: Այն փաստը, որ տարածաշրջանի քրիստոնեական բոլոր սրբությունները միմիայն հայկական արձանագրություններ ունեն, ադրբեջանցի, այսպես կոչված, արբանականության գաղափարախոսների կողմից բացատրվում են՝ պարզապես «հայկական կեղծիքներ» լինելով: Ենթադրյալ արբանական եկեղեցու քրիստոնյա հոգևորականներն այս տարածք են բերվել, երբ Ադրբեջանը վերահսկողության տակ առավ Քելբաջարի շրջանը 2020 թ. նոյեմբերին:

2022 թ. փետրվարի 3-ին ադրբեջանական «Report» տեղեկատվական կայքը հրապարակել է մի հոդված՝ Ադրբեջանի մշակույթի նախարար Անար Քերիմովի ծանուցմամբ: Պաշտոնյան հայտնում է, որ Ադրբեջանը ստեղծել է հատուկ աշխատանքային խումբ՝ կազմված Ալբանիայի պատմության, մշակույթի և ճարտարապետության մասնագետներից, ինչպես նաև պետական կառույցների ներկայացուցիչներից, որոնց «հետաքննությունից հետո» հանձնարարվելու է «պարզել այն կեղծված գրությունները, արձանագրությունները և հետքերը, որոնք հայերի կողմից են թողնվել», և ջնջել դրանց Արցախի՝ «ալբանական կրոնական/քրիստոնեական» շինությունների պատերից: Քերիմովը հավելում է, որ աշխատանքային խումբն արդեն իսկ ստուգել է «ալբանական կրոնական շինությունների» որոշ գրություններ, սակայն վերջնական վճիռը պետք է իրականացվի միայն այն բանից հետո, երբ տարածքները կազատվեն ականներից և արդեն ապահով միջավայրում, միջազգային կազմակերպությունների ակտիվ մասնակցությամբ, փորձագետները կբացահայտեն, կփաստագրեն և միջազգային հանրությանը կներկայացնեն «հայերի կողմից կատարված կեղծիքները»: Արձանագրությունները տվյալ ժառանգության պատկանելիության սկզբնական նշանակության կարևորագույն վկայությունն ու ապացույցն են:<sup>8</sup> 2021 թ. մարտի 1-ին, Հադրութի շրջան կատարած այցի ժամանակ, Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը ծակուռի գյուղում հայտարարեց, որ 2010 թ. վերականգնված Ցաղկավանքի Աստվածածին եկեղեցու արձանագրություններն ու խաչերը լրի հետազայում են փորագրվել, և որ այն պարզապես հայկականացված ուղիական եկեղեցի է:<sup>9</sup>

Եթե այս համատեքստում դիտարկում ենք վերը նշված հուշարձանների ոչնչացման գործողությունների երեք խնդրահարույց դաշտերը, ապա Արդարադատության միջազգային դատարանը (ԱՄԴ) և ՄԱԿ-ն ու համապատասխանաբար ՅՈՒՆԵՍԿՕ-ն են հանդիսանում հիմնական հասցեատերերը: ՅՈՒՆԵՍԿՕ-ն մշակութային ժառանգության միտումնավոր ոչնչացման մասին հռչակագիր է հրապարակել դեռևս 2003 թ. հոկտեմբերի 17-ին (Declaration Concerning the Intentional Destruction of Cultural Heritage):<sup>10</sup> Սակայն հարկ է նաև նշել, որ հայերը դառը փորձ են ունեցել ՅՈՒՆԵՍԿՕ-ի անգործության հետ կապված: 1997-2006 թթ. միջև ընդհանուր թվով 28000 հուշարձան, որոնց մեջ էին մտնում 89 միջնադարյան եկեղեցի, 5840 խաչքար և 22000 տապանաքար, ոչնչացվել են ադրբեջանական բանակի կողմից բուլդոզերների միջոցով:<sup>11</sup> Սակայն ՅՈՒՆԵՍԿՕ-ն չարձագանքեց ադրբեջանական զինուժի կողմից անգամ նախիջևանի Ջուղա քաղաքի պատմական գերեզմանատան հազարավոր հայկական խաչքարերի և տապանաքարերի հստակ կերպով փաստագրված ոչնչացմանը: Հայերը դա կապում են ադրբեջանական զգալի ազդեցության հետ: 2020

8 Monument Watch (5 February 2022):

9 CBC TV Azerbaijan (16 March 2021):

10 UNESCO (17. Oktober 2003):

11 Ministry of Foreign Affairs of the Republic of Armenia (2022), 4:

թ. նոյեմբերի 18-ին, Արցախի վրա ադրբեջանական հարձակումից հետո, ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր տնօրենուհի, Օդրի Ազուլեն իր մոտ ընդունեց ՅՈՒՆԵՍԿՕ-ի Հայաստանի և Ադրբեջանի ներկայացուցիչներին: Այս առիթով նա վերահաստատեց մշակութային ժառանգության համաշխարհային հարթությունը՝ որպես պատմության վկայություն, որը ժողովուրդների ինքնությունից անբաժանելի է: Միջազգային հանրությունը պետք է պաշտպանի և պահպանի այս ժառանգությունը ապագա սերունդների համար՝ ներկա հակամարտություններից անդին: Նա նաև հիշեցրեց 1954 թ. «Ջինված ընդհարման դեպքում մշակութային արժեքների պաշտպանության մասին» կոնվենցիայի և դրա երկու հավելյալ արձանագրությունների դրույթները, որոնք ընդունել են և՛ Հայաստանը, և՛ Ադրբեջանը, և որոնք հիմնված են ստորագրող պետությունների այն համոզմունքի վրա, որ «ցանկացած ժողովրդի պատկանող մշակութային կոթողների վնասումը նշանակում է ողջ մարդկության մշակութային ժառանգության վնասում»:<sup>12</sup> Գլխավոր տնօրենուհին երկու երկրներին էլ առաջարկել է ուղարկել փորձագիտական անկախ հանձնաժողով՝ Արցախում և նրա շրջակայքում մշակութային արժեքների նախնական ցուցակը կազմելու համար: Մինչ Հայաստանը օպերատիվ և բազմիցս արտահայտել է լիակատար համագործակցության իր պատրաստակամությունն այս հարցում, «[...] Ադրբեջանը, որն ի սկզբանե քաղաքականացրել է տվյալ խնդիրը, ներկայումս նոր խոչընդոտներ է ստեղծում ՅՈՒՆԵՍԿՕ-ի արդյունավետ ներգրավման համար և փորձում խեղաթյուրել առաջարկվող առաքելության շրջանակն ու նպատակը»:<sup>13</sup>

1954 թ.-ից իվեր կնքվել են նաև մշակութային ժառանգության պաշտպանության մի շարք միջազգային կոնվենցիաներ.

- 1954 թ. Հաագայի կոնվենցիան նպատակ ունի պաշտպանել մշակութային արժեքները զինված հակամարտություններում: Հայաստանն ու Ադրբեջանը նույնպես պայմանավորվածության կողմերից են, որոնք ստորագրել են նաև հարակից արձանագրությունը, ինչը գործում է անգամ օկուպացված տարածքներում: Նրանք երկուսն էլ ստորագրել են նաև մշակութային արժեքների ուժեղացված պաշտպանության մասին երկրորդ արձանագրությունը, ըստ որի՝ արգելվում է իրագործել «մշակութային արժեքների օգտագործման ցանկացած փոփոխում կամ փոփոխության կատարում, որը նպատակ ունի թաքցնել կամ վերացնել մշակութային, պատմական կամ գիտական տեղեկությունները»:
- ՅՈՒՆԵՍԿՕ-ի 1972 թ. նոյեմբերի 16-ի կոնվենցիան պաշտպանում է համաշխարհային մշակութային և բնական ժառանգությունը:

Գոյություն ունեն նաև ՅՈՒՆԵՍԿՕ-ի մի շարք լրացուցիչ առաջարկություններ, ինչպիսիք են օրինակ՝ 1956 թ. հնագիտական պեղումների միջազգային սկզբունքների վերաբերյալ, 1968 թ. հանրային կամ մասնավոր աշխատանքների

12 UNESCO (20 November 2020):

13 Ministry of Foreign Affairs of the Republic of Armenia (2022), 21:



պատճառով վտանգի տակ գտնվող մշակութային արժեքների պահպանման մասին և 1976 թ. պատմական վայրերի պահպանության ու նպատակային օգտագործման վերաբերյալ հանձնարարականները:

Բացի այդ, Հայաստանն ու Ադրբեջանը պայմանագրային կողմեր են հանդիսանում Եվրոպական մշակութային կոնվենցիայի, Հնագիտական ժառանգության պաշտպանության վերանայված եվրոպական կոնվենցիայի<sup>14</sup> և Ազգային փոքրամասնությունների պաշտպանության շրջանակային կոնվենցիայի (1994 թ.) դեպքում:<sup>15</sup> 2021 թ. հունիսի 21-ին Եվրախորհուրդը հայտարարեց հակամարտությունների և ճգնաժամերի ժամանակ մշակութային ժառանգության պաշտպանության վերաբերյալ իր եզրակացությունները:

Փաստորեն, միջազգային պայմանագրերի, հայտարարությունների և նույնիսկ Արդարադատության միջազգային դատարանի հնարավոր վճիռների պակաս չկա: Monument Watch հայկական հարթակը, այնուամենայնիվ, խիստ մտահոգություն ունի ադրբեջանական կողմից Արցախի վերահսկվող տարածքում գտնվող մեծ ու նշանավոր շինությունների և, մասնավորապես, հետևյալ սրբավայրերի ճակատագրի վերաբերյալ. Սբ. Ամենափրկիչ (Ղազանչեցոց) տաճարը, արցախյան պատմական մայրաքաղաք Շուշիում, ադրբեջանական ուժերի կողմից հրթիռակոծվել է 2020 թ. հոկտեմբերի 8-ին, ինչի պատճառով վնասվել են եկեղեցու զմբեթն ու թևերի տանիքները: Եկեղեցու աղոթասրահն ամբողջությամբ փլատակերով էր լցված: Այս ընթացքում, չնայած որ փլատակերի հետքերը մաքրվել են, ըստ Monument Watch-ի, եկեղեցու ներկայիս վիճակը մնում է անհայտ: Նույնպես Շուշիում 19-րդ դ. կառուցված Սբ. Հովհաննես Մկրտիչ եկեղեցին, որը հայտնի է նաև «Կանաչ ժամ» անվանումով, պայթեցվել ու հողին է հավասարեցվել 2020 թ. պատերազմից անմիջապես հետո: 2020 թ. նոյեմբերի կեսերին՝ Ադրբեջանի կողմից Շուշիի գրավումից կարճ ժամանակ անց, սոցցանցերում տարածվեցին պատկերներ և տեսանյութեր, որոնք ցույց էին տալիս Սբ. Հովհաննես եկեղեցու լրջորեն վնասված լինելը. եկեղեցու զմբեթն ու զանգակատունը գրեթե ամբողջությամբ ավերվել էին: Ավելի ուշ՝ 2021 թ. փետրվարին, Google Earth-ի արբանյակային պատկերները հաստատեցին, որ այս եկեղեցին ամբողջությամբ գետնին է հարթեցվել, իսկ զանգակատունն ու զմբեթը հանվել են: 2022 թ. հունվարի 17-ին համացանցում տեսանյութ տարածվեց, որտեղ երևում է, թե ինչպես են ադրբեջանցիները եկեղեցու հովվատունը վերածել ռեստորանի:<sup>16</sup>

Ինչպես կարելի է Արցախում իրականացնել քրիստոնեական-հայկական հուշարձանների արդյունավետ պաշտպանությունը: Պատասխանն ուղղակիորեն կապված է տարածաշրջանի քաղաքական և համապատասխանաբար՝ պետական-

14 Council of Europe (16 January 1992):

15 Council of Europe (10 November 1994):

16 Ministry of Foreign Affairs of the Republic of Armenia (2022), 7:

քաղաքական կարգավիճակի հետ: Ինչպես հայտնի է, այս կարգավիճակի մասին վիճաբանությունը գնում է 20-րդ դ. սկզբից ի վեր: 1919 թ. Փարիզի խաղաղության վեհաժողովը որևէ բավարար արդյունքի չհասավ, բայց նաև չճանաչեց Ադրբեջանի մշտական գերիշխանությունը Արցախի նկատմամբ: Գրեթե երկուսուկես տարի անց՝ 1921 թ. բոլշևիկները փաստեր ստեղծեցին հօգուտ Ադրբեջանի Խորհրդային Հանրապետության՝ հռչակելով այսպես կոչված Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը: Այն փաստը, որ այս վարչական բաժանումը տեղի է ունեցել հայկական մեծամասնության կամքին հակառակ կամ ընդհանրապես առանց հանրաքվեի, այսօր մեծամասամբ անհայտ է կամ անտեսվում է, երբ արտասահմանյան լրատվամիջոցներում խոսվում է այն մասին, թե Արցախն իբր միջազգային իրավունքով պատկանում է Ադրբեջանին:

Վեցշաբթյա պատերազմը, որը Ադրբեջանը սկսել էր Թուրքիայի աջակցությամբ՝ խախտելով միջազգային իրավունքը, ինչպես նաև 2020 թ. նոյեմբերի 9-ի զինադադարը, ի թիվս այլոց, բարձրացնում են ՀՀ ղեկավարի լիազորության հարցն այս զինադադարի ստորագրման խնդրում, անգամ եթե դա տեղի է ունեցել Արցախի Հանրապետության նախագահի հետ խորհրդակցելով ու համաձայնեցնելով:<sup>17</sup> ՀՀ-ն, իր հիմնադրման օրից, երբեք չի համարձակվել ճանաչել ինքնահռչակ Արցախի Հանրապետությունը, էլ չսասած՝ ինտեգրելու այն իր պետական տարածքին, ինչպես որ դա պահանջում էր ղարաբաղահայ բնակչությունը 1988 թ.: Արցախը/Ղարաբաղը, հետևաբար, Հայաստանի և Ադրբեջանի հանրապետությունների միջև վիճելի տարածք չէ, այլ դե ֆակտո ինքնավար պետականության դատապարտված մի տարածք, որը, այնուամենայնիվ, գրեթե երեսուն տարի հաջողությամբ խուսափել է ադրբեջանական օտար լծից: Նշված, գրեթե երեք տասնամյակների ընթացքում Արցախի հայերը, հայկական սփյուռքի աջակցությամբ, անձնագրահարս վերականգնեցին ու խնամեցին խորհրդային տարիներին անտեսված և ղարաբաղյան առաջին պատերազմում մասամբ ավերված մշակութային հուշարձանները: Բացի այդ, նրանք կանգնեցրին նոր սրբավայրեր, ինչպիսիք են օր.՝ Բերձորի (Լաչին) շրջանային կենտրոնի Սբ. Համբարձման եկեղեցին, որն այժմ մզկիթի է վերածվում, կամ Մեխակավանի (Ջաբրայիլ) Սբ. Աստվածածին եկեղեցին, որն օծվել էր ընդամենը 2017 թ., իսկ պատերազմից քիչ անց, պղծվել ու ավերվել՝ ադրբեջանական զինված ուժերի կողմից 2020 թ. նոյեմբերի 14-ին, և որից ոչ մի հետք այլևս չի հայտնաբերվել 2021 թ. մարտին:

Ազգերի լիզայի արդարադատության միջազգային դատարանը (ԱՄԴ) 2021 թ. դեկտեմբերի 7-ի իր վճռով Ադրբեջանին պարտավորեցրել է ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ կանխելու և պատժելու վանդալիզմի և պղծման արարքները՝ ուղղված հայկական մշակութային ժառանգության դեմ ներառյալ, բայց չսահմանափակվելով միայն եկեղեցիներով և այլ աղոթատեղիներով, արձաններով, ճարտարապետական հուշարձաններով, գերեզմաններով և հնություններով:

17 The Armenian Weekly (9 November 2020):

Բացի դրանից, ԱՄԴ-ը պատվիրել է նաև Հայաստանին և Ադրբեջանին ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ ռասսայական ատելության հրահրումը կանխելու համար:<sup>18</sup> Այդուամենայնիվ՝ նախագահ Ալիևի կողմից 2021 թ. Բաքվում կառուցված պատերազմական ավարի այգին շարունակում է բորբոքել հայերի նկատմամբ ատելությունն ու անվստահությունը՝ անգամ եթե ռասիստական ցուցանմունքների մի մասը ներկայումս հեռացված է:

Քրեական հետապնդումը պահանջում է ոչնչացումն ու մշակութային յուրացումը հիմնավորող գիտական փաստագրություններ: Դժվար է սակայն նման բան իրականացնել այն տարածքներում, որոնք դուրս են ռուս խաղաղապահների վերահսկողությունից: Առայժմ հստակեցված չէ նաև այն հարցը, թե ի՞նչ է տեղի ունենալու 2025 թվականին՝ վերոնշյալ պայմանագրի հնգամյա ժամկետը լրանալուց հետո: Կլիմի՝ արդյոք ռուս խաղաղապահների մանդատի երկարացում: Արդյո՞ք Ռուսաստանը դեռ պատրաստ կլինի ու կկարողանա նման զորախումբ տեղակայել այնտեղ: Արդյոք հնարավոր կլինի նաև միջազգային խաղաղապահներ բերել այս տարածաշրջան: Թե՞ միջազգայնորեն չճանաչված փոքր Արցախի Հանրապետության կառավարությանը կպարտադրվի դիմել Ռուսաստանին, նրա պետության կազմում ներառվելու համար, ինչպես որ արդեն իսկ իբրև հնարավոր հեռանկար նշել է Արցախի նախագահ Արայիկ Հարությունյանը: Հաշվի առնելով Ուկրաինայում շարունակվող պատերազմական իրադարձությունները՝ ստացվում են էլ ավելի շատ հարցեր, քան պատասխաններ: Ուստի, արցախահայության և նրա մշակութային համար ապագան, ցավոք, ավելի անորոշ է, քան երբևէ:

## Գրականություն

Adamov, Konstantin, In Azerbaijan, it was decided to declare Armenian cross-sculptures of the 17-19 centuries as Albanians, 24 November 2021, տես՝ <https://www.kadamov.com/2021/11/24/in-azerbaijan-it-was-decided-to-declare-armenian-cross-sculptures-of-the-17-19-centuries-as-albanians/> (հարցվել է 14.8.2023):

Armenia Today, 8 February 2022, Monumentwatch.org: Armenian church in Artsakh's Karintak village being vandalized by Azerbaijanis, տես՝ <https://armeniatoday.com/40206-monumentwatch-org-armenian-church-in-artsakh-s-karintak-village-being-vandalized-by-azerbaijanis.html> (հարցվել է 14.8.2022):

CBC TV Azerbaijan, 16 March 2021, Президент Азербайджана и первая леди посетили освобожденные районы, տես՝ <https://www.youtube.com/watch?v=blq-Kn1QnMs> (հարցվել է 14.8.2023):

Council of Europe, 16 January 1992, European Convention on the Protection of the Archaeological Heritage (Revised) (ETS No. 143), տես՝ <https://www.coe.int/en/web/conventions/-/council-of-europe-european-convention-on-the-protection-of-the-archaeological-heritage-revised-ets-no-143-translations> (հարցվել է 14.8.2023):

Council of Europe, 10 November 1994, Convention for the Protection of National Minorities, տես՝ <https://www.coe.int/en/web/minorities/at-a-glance> (հարցվել է 14.8.2023):

Cricchio Emilio Luciano, Azerbaijani forces violate line of contact and advance positions in Karabakh, in: »Civilnet«, 24 March 2022, տես՝ <https://www.civilnet.am/en/news/654947/azerbaijani-forces-violate-line-of-contact-and-advance-positions-in-karabakh/> (հարցվել է 14.8.2023):

European Parliament resolution of 10 March 2022 on the destruction of cultural heritage in Nagorno-Karabakh (2022/2582(RSP)), տես՝ <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/PDF/?uri=CELEX:52022IP0080> (հարցվել է 14.8.2023):

International Court of Justice, 7 December 2021, Application of the International Convention of the Elimination of all forms of Racial Discrimination, տես՝ <https://www.icj-cij.org/public/files/case-related/180/180-20211207-ORD-01-00-EN.pdf> (հարցվել է 14.8.2023):

Ministry of Foreign Affairs of the Republic of Armenia: Ad Hoc Report of the Armenian Commission to UNESCO on the Destruction and Acts of Vandalism Perpetrated Against Armenian Cultural Property in 2020 – 2022 by Azerbaijan, Yerevan, March 7, 2022:

Monument Watch, 5 February 2022, Azerbaijan intends to completely destroy the Armenian cultural heritage in the occupied territories, տես՝ <https://monument-watch.org/en/alerts/azerbaijan-intends-to-completely-destroy-the-armenian-cultural-heritage-in-the-occupied-territories/> (հարցվել է 14.8.2023):

The Armenian Weekly, 9 November 2020, Artsakh President Arayik Harutyunyan on Armenia's Agreement with Azerbaijan, Russia, տես՝ <https://armenianweekly.com/2020/11/09/artsakh-president-arayik-harutyunyan-on-armenias-agreement-with-azerbaijan-russia/> (հարցվել է 14.8.2023):

UNESCO, 17. Oktober 2003, Declaration concerning the Intentional Destruction of Cultural Heritage, տես՝ <https://en.unesco.org/about-us/legal-affairs/unesco-declaration-concerning-intentional-destruction-cultural-heritage> (հարցվել է 14.8.2023):

UNESCO, 20 Nov 2020, Nagorno-Karabakh: Reaffirming the obligation to protect cultural goods, UNESCO proposes sending a mission to the field to all parties [Press Release], տես՝ <https://en.unesco.org/news/nagorno-karabakh-reaffirming-obligation-protect-cultural-goods-unesco-proposes-sending-mission> (հարցվել է 14.8.2023):

---

## Հեղինակ

### Տեսաս Հոֆման, փիլ. գիտ. դոկտ., պատվո պրոֆ.

Գրող և անկախ գիտնական՝ հայագիտության և ցեղասպանության ոլորտներում, Բեռլինի ազատ համալսարանի Արևելյան Եվրոպայի ինստիտուտի գիտաշխատող մինչև 2015 թ., Գերմանիա, [Tessa.Hofmann@katwastan.de](mailto:Tessa.Hofmann@katwastan.de)

**Թարգմանությունը՝** Հարություն Գ. Հարությունյանի

---

## Open Access

This paper is published under the Creative Commons Attribution-ShareAlike 4.0 International license (CC BY-SA 4.0). Please note that individual, appropriately marked parts of the paper may be excluded from the license mentioned or may be subject to other copyright conditions. If such third party material is not under the Creative Commons license, any copying, editing or public reproduction is only permitted with the prior consent of the respective copyright owner or on the basis of relevant legal authorization regulations.